



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունվարի 2017թ.

N 2 -Ս

ք.Ստեփանակերտ

**ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ ԸՆԴԳՐԿՈՂ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ
ՀԱՆՐԱՔՎԵ ԿԱԶՄԱԿԵՐՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՅՆՈՂ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 34-րդ հոդվածի 3-րդ մասին, «Հանրաքվեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի «դ» կետին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 28-ի N 15-Ն որոշմանը համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ 2017 թվականի փետրվարի 20-ի հանրաքվեն կազմակերպում և անցկացնում է՝

1) թիվ 10 ընտրատարածքում ընդգրկված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Բերձոր, Կովսական, Միջնավան, Որոտան, Ալաշկերտ, Աղաձոր, Աղանուս, Աղավնատուն, Աղավնո, Այգեհովիտ, Այգեկ, Արախիշ, Արծվաշեն, Արտաշավի, Գանձա, Գետամեջ, Գետափ, Գողթանիկ, Դրախտաձոր, Երիցվանք, Իշխանաձոր, Լեռնահովիտ, Ծաղկաբերդ, Ծիծեռնավանք, Ծոբաձոր, Կերեն, Կումարի, Հակ, Հակարի, Հայկազյան, Հոչանց, Ձորափ, Ղազարապատ, Մամարք, Մարտունաշեն, Միրիկ, Մշենի, Մոշաթաղ, Մուշ, Ներքին Սուս, Նորաշենիկ, Շալուա, Սարատակ, Սոնասար, Վակունիս, Վաղազին, Վան, Վարդաբաց, Վուրգավան, Տիգրանավան, Ուռեկան, Փակահան, Քաշունիք, Քարեգահ և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի Շուշի, Եղսահող, Լիսագոր, Հին շեն, Մեծ շեն, Քարին տակ, Քիրսավան համայնքներում՝ հանրաքվեի Քաշաթաղի տարածքային հանձնաժողովը.

2) թիվ 11 ընտրատարածքում ընդգրկված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Առաջաձոր, Գառնաքար, Դրմբոն, Թբլդու, Ծմակահող, Կիչան, Կոճողոտ, Հարությունագումեր, Նոր Ղազանչի, Շահմասուր, Չլղրան, Պողոսագումեր, Վաղուհաս, Վանք, Վերին Հոռաթաղ, Քոլատակ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի Քարվաճառ, Ակնաբերդ, Դաղիվանք, Եղեգնուտ, Զուար, Ծար, Հավսաթաղ, Նոր Բրաջուր, Նոր Գետաշեն, Նոր Էրքեջ, Նոր Կարաչինար, Նոր Խարխափուտ, Նոր Մանաշիդ, Նոր Վերինշեն, Չարեքտար, Քնարավան և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Այգեստան, Աստղաշեն, Դահրավ, Լուսաձոր, Խանցք, Խաչեն, Խնածախ, Խնձրիստան, Ծաղկաշատ, Հիլիս, Պատարա, Ռն համայնքներում՝ հանրաքվեի Մարտակերտի տարածքային հանձնաժողովը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ